




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7306

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Յ. Դ.

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ



ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ԼԵՌՆԱՎԱՅՐԻ Կ. ԿՕՄԻՏԵԻ ԿՈՂՄԷ



1931

666

329.14

Ծ-89

529.14
D-89

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Յ. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԼԵՌՆԱՎԱՅՐԻ Կ. Կ. Ի ԿՈՂՄԷ



ԱՆՈՒՆ

ՅՕԴ. 1. — Միութիւնը կը կոչուի Հ. Յ. Դ.
Պատանեկան Միութիւն:

ՆՊԱՏԱԿ

ՅՕԴ. 2. — Միութեան նպատակն է մղում տալ հայ պատանիներու բարոյական, մտաւոր և ֆիզիքական զարգացման, տոհմային և քաղաքական դաստիարակութեան:

ՄԻՋՈՑՆԵՐ

Բ 2003

ՅՕԴ. 3. — Միութիւնը իր նպատակին հասնելու համար՝

Ա. կ'ունենայ իր սեփական գրադարանը.

Բ. կը սարքէ դասախօսութիւններ, ասուլիսներ, վիճաբանական ժողովներ, գեղարուեստական երեկոյթներ, մարմնակրթանքի խաղեր, մար-

ղանքներ, զբօսանքներ, կը կազմակերպէ Հայոց Պատմութեան ու քաղաքական գրականութեան ընթերցանութիւններ:

Գ. Անդրադէտ պատանիներու կը սորվեցնէ հայերէն գրել, կարդալ:

ՀԱՍՈՅԹԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ

ՅՕԴ. 4. — Միութեան հասոյթի աղբիւրները կը կազմեն՝ ամսավճարներ, կամաւոր նուիրատուութիւններ, ներկայացումներ և երեկոյթներ, գրադարանի եկամուտներ, վիճակահանութիւններէ, դասախօսութիւններէ և հաւաքոյթներէ գոյացած գումարները:

ԱՆԴԱՄԱՅՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 5. — 15-20 տարեկան ամէն հայ պատանի, առանց դաւանանքի խտրութեան, կրնայ արձանագրուել Միութեան, ընդունելով անոր Մրադիր-Վանոնա-դիրը և ենթարկուելով Միութեան որոշումներուն:

ՅՕԴ. 6. — Անդամագրուել փափաքողը գրաւոր կը դիմէ վարչութեան, իր դիմումագրին կցելով միութեան երկու անդամներուն բարոյական երաշխաւորագիրը:

ՅՕԴ. 7. — Վարչութիւնը իրաւասու է ունէ դիմում մերժելու կամ ընդունելու:

ՅՕԴ. 8. — Նոր ընդունուած անդամ մը երեք ամիս յետոյ միայն ընտրուելու իրաւունքը կ'ունենայ:

ՅՕԴ. 9. — Անդամներ պարտաւոր են նուազագոյն 10 զրէ. սուր. ամսական վճարել:

Ծանօթ. — Այլ կոչակցութեան պատկանողներ՝ չեն կրնար Միութեան անդամագրուել:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ:

ՅՕԴ. 10. — Միութեան բոլոր անդամներու մասնակցութեամբ կը գումարուի ընդհանուր ժողովը:

ՅՕԴ. 11. — Ընդհանուր ժողովը վարչութեան գործունէութեան հսկող և համարառու մարմինն է:

ՅՕԴ. 12. — Ընդհանուր ժողովը կ'ընտրէ վարչութիւնը:

ՅՕԴ. 13. — Ընդհանուր ժողովը օրինաւոր կը նկատուի երբ անդամներու ընդհանուր թիւին կէսէն մէկ անդամ աւելի է:

Ծանօթ. — Ընդհանուր ժողովէն մասնաւոր պատճառով բացակայողներ պէտք է նախապէս տեղեկացնեն ժողովի ղեկանին:

ՅՕԴ. 14. — Առանց մասնաւոր պատճառի երեք անգամ յաջորդաբար ընդհանուր ժողովէն բացակայողները հրաժարած կը նկատուին:

ՅՕԴ. 15. — Ընդհանուր ժողովը կանոնաւոր կերպով կը գումարուի ամիսը մէկ անգամ, կրնայ գումարուիլ բացառիկ պարագաներու տակ, նաև, անդամներուն 1/3 ին գրաւոր պահանջով:

ՅՕԴ. 16. — Ընդհանուր ժողովը կը գումարուի վարչութեան հրաւերով:

ՅՕԴ. 17. — Ընդհանուր ժողովը գաղտնի քուէով կ'ընտրէ իր մնայուն Քարտուղարը և իւրաքանչիւր ժողովի համար նախագահ: Քարտուղարի պաշտօնավարութիւնը կը տևէ միայն վեց ամիս:

94730-42



42-2003

80Դ. 18. — Ընդհանուր ժողովը ի պահանջել հարկին կ'ընտրէ Դատական և Քննիչ Յանձնախումբեր :

Բ. — ՎԱՐԶՈՒԹԻՒՆ :

80Դ. 19. — Վարչութիւնը Միութեան ընթացիկ գործերը կը վարէ ու կը բաղկանայ 5—7 անդամներէ :

80Դ. 20. — Վարչութիւնը կ'ընտրուի ընդհանուր ժողովէն քաղտնի քուէարկութեամբ և պարզ մեծամասնութեամբ :

80Դ. 11. — Վարչութեան պաշտօնավարութեան շըրջանը 6 ամիս է :

80Դ. 22. — Վարչութեան անդամներէն եթէ մասնակի հրաժարողներ գտնուին, Ընդհանուր ժողովը նոր ընտրութեամբ կը լրացնէ պակասը :

80Դ. 23. — Վարչութիւնը աշխատանքի բաժանումով, կ'ունենայ քարտուղար մը, գանձապահ մը և գոյքապահ մը :

80Դ. 24. — Վարչութիւնը չաբաթը անգամ մը կ'ունենայ իր ժողովը և կ'գրադի Միութեան ընթացիկ գործերով :

80Դ. 25. — Վարչութիւնը կ'ընտրէ հետեւեալ Յանձնաժողովները և կը հսկէ անոնց գործունէութեանց :

Ա. Գրադարանի

Բ. Գեղարուեստական

Գ. Դասախօսական

Դ. Մարզանքի

80Դ. 26. — Գրադարանի Յանձնաժողովին պարտականութիւնն է՝

Ա. Միութեան տրամադրելի միջոցներով ճոխացնել Գրադարանը :

Բ. Յատուկ Կանոնագրի տրամադրութեանց համաձայն զարկ տալ ընթերցասիրութեան :

Գ. Հսկել գրքերու խնամքով պահպանման :

80Դ. 27. — Գեղարուեստական Յանձնաժողովին պարտականութիւնն է ղեկավարել Միութեան գեղարուեստական ձեռնարկներով :

80Դ. 28. — Դասախօսական Յանձնաժողովին պարտականութիւնն է սարքել դասախօսութիւններ, վիճարանական ծողովներ և դրական ասուլիսներ :

80Դ. 29. — Մարզանքի Յանձնաժողովին պարտականութիւնն է ղեկավարել Միութեան մարզական գործերով :

80Դ. 30. — Վարչութիւնը երեք ամիսը անգամ մը տեղեկատուութիւն կ'ընէ Ընդհանուր ժողովին և վաւերացնել կուտայ իր նիւթական հաշիւները :

80Դ. 31. — Վարչութիւնը լուծուած կը համարուի երբ իր մեծամասնութիւնը կորսնցնէ :

80Դ. 32. — Վարչութեան անդամները վերնտրելի են :

Վ Ա Ր Ի Զ

80Դ. 33. — Հ. Յ. Դ. բարոյական հսկողութեան տակ գտնուող Պատանեկան Միութիւնը կ'ունենայ Վարիչ մը, ընտրուած Հ. Յ. Դ. Տեղական Կօմիտէի կողմէ :

80Դ. 34. — Վարիչի պաշտօնն է ուղղութիւն տալ

Միութեան գործունէութեան և հսկել Ծրագիր-Կանոնագրի անթերի գործադրման :

80Դ. 35. — Վարիչը կը մասնակցի Վարչական և Ընդհանուր ժողովներուն և կը հաստատէ տրուած որոշումները, կամ կը մերժէ այն բոլորը որ հաճապատասխան չէ Կուսակցութեան շահերուն :

Ծանօթ. — Հրապարակային յայտարարութիւններ, գաւաթօսութիւններ և այլ ձեռնարկներ կ'ըլլան Վարիչի հաւանութեամբ և Կօմիտէի գիտութեամբ :

80Դ. 36. — Առանց Վարիչի հաւանութեան Վարչութիւնը չի կրնար բացառիկ ձեռնարկներ կատարել :

80Դ. 37. — Անհրաժեշտ նկատուած պարագային Վարիչը իրաւասու է լուծելու Վարչութիւնը և հրաւիրելու Ընդհանուր ժողով :

80Դ. 38. — Վարիչի թուլութեան և անպարտաճանաչութեան պարագային, Վարչութիւնը իրաւասու է իմացնելու Հ. Յ. Դ. Տեղական Կօմիտէին : Վարիչը պատասխանատու է Կօմիտէի առջև, Վարչութեան բոլոր գործունէութեան համար :

Ծանօթ. — Կուսակցական ունէ Մարմին չ'եղած վայրերու մէջ, Ընդհանուր ժողովը կ'ընտրէ իր Վարիչը :

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

80Դ. 39. — Միութեան հանդէպ յանցաւոր կը նկատուին այն անդամները որոնք՝

ա) Ծրագիր-Կանոնագրի հակառակ ընթացք կը բռնեն :

բ) Յաճախակի կը բացակային ժողովներէ :

դ) Չեն կատարեր իրենց վրայ դրուած պարտականութիւնը :

դ) Երեք ամիս ամսավճար չ'են տար :

ե) Կ'իւրացնեն Միութեան դրամը կամ գոյքը :

զ) Միութիւնը վարկաբեկող արարքի մը մէջ կը գտնուին :

80Դ. 40. — Յանցաւոր նկատուած անդամ մը, Վարչութեան կողմէ կ'ստանայ դիտողութիւն և յանդիմանութիւն, աւելի ծանր յանցանքի պարագային Վարչութիւնը կը կախակայէ խնդրոյ առարկայ եղող անդամը և խնդիրը կը յանձնէ Ընդհանուր ժողովի նկատուման :

80Դ. 41. — Միութենէն վերջնական արտաքսման որոշումը կը տրուի Ընդհանուր ժողովով :

80Դ. 42. — Միութեան գոյքը կամ դրամը անդամներէն ունէ մէկուն կողմէ իւրացուելու պարագան կը յայտնուի նաև Հ. Յ. Դ. Տեղական Կօմիտէին :

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

80Դ. 43. — Ծրագիր-Կանոնագիրը կը հաստատուի Ընդհանուր ժողովէն, և գործադրութեան կը դրուի Կեդր. Կօմիտէի յատուկ շրջաբերականով : Ծրագիր-Կանոնագրի փոփոխութիւնը վերապահուած է Շրջանային ժողովին :

ՓՈԽԱՆՑՈՒՄ (Շրջանաւարտ)

80Դ. 44. — Պատանեկան Միութեան մէջ պատանիները կրնան մնալ առ առաւելն երեք տարի, առնուազն 6 ամիս :



Տարին մէկ կամ երկու անգամ, պատանիներէ մաս
մը կ'անցնին կուսակցական շարքերը :

Փոխանցումը կը կատարուի Վարչութեան որոշու-
մով և Վարիչի հաւանութեամբ :

Միմիայն Վարիչի կարգադրութեամբ պատանին
չի կրնար շարքերը անցնիլ :

ԼՈՒԾՈՒՄ

ՅՕԴ. 45. — Միութիւնը լուծուելու պարագային,
բոլոր գոյքերը կը մնան Հ. Յ. Դ. Տեղական Կոմիտէին :

Միութիւնը լուծուելու իրաւասութիւնը վերապահ-
ուած է Հ. Յ. Դ. Տեղական Կոմիտէին :



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0040484

